



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀՈԳԱԲԱՐՉՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia
հեռ.՝ (+374-60) 71-01-31, ներքին՝ 11-31, էլ. հասցե՝ board@ysu.am , www.yso.am

№ 013 «20» հուլիսի 2019 թ.

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
«Երևանի պետական համալսարան»
հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝
2019 թ. հուլիսի 20-ին տեղի ունեցած թիվ 13 նիստի
(հարցման կարգով)

ք. Երևան

Հարցման կարգով անցկացված նիստին մասնակցել են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 32 անդամներից 20-ը (անդամների ստորագրացուցակը կցվում է):

Օրակարգում՝

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2019 թ. հաստիքային ցուցակի հաստատում,
2. «ԵՊՀ հրատարակչություն» ՍՊԸ-ի գործունեության կասեցում և ԵՊՀ-ի կազմում «Հրատարակչություն» կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում:
3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման լուծարում:

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2019 թ. հաստիքային ցուցակի հաստատում:

Խորհրդի քարտուղար Ա. Իսրայելյանի կողմից Խորհրդի 32 անդամներին ուղարկվել են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2019 թ. հաստիքային ցուցակի հաստատման քվեարկության թերթիկները: Խորհրդի թվով 20 անդամներ մասնակցել են քվեարկությանը և լրացված քվեաթերթիկները վերադարձրել են Խորհրդի քարտուղարին:

Քվեարկության արդյունքները հետևյալն են. կողմ՝ 20, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Քվեարկության արդյունքներով Խորհուրդը որոշեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 6-րդ ենթակետով և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 6-րդ ենթակետով՝ հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2019 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն հավելվածի:

2. «ԵՊՀ հրատարակչություն» ՍՊԸ-ի գործունեության կասեցում և ԵՊՀ կազմում «Հրատարակչություն» կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում:

Խորհրդի քարտուղար Ա. Իսրայելյանի կողմից Խորհրդի 32 անդամներին ուղարկվել են «ԵՊՀ հրատարակչություն» ՍՊԸ-ի գործունեության կասեցման և ԵՊՀ կազմում «Հրատարակչություն» կառուցվածքային ստորաբաժանման ստեղծման քվեարկության թերթիկները: Խորհրդի թվով 20 անդամներ մասնակցել են քվեարկությանը և լրացված քվեաթերթիկները վերադարձրել են Խորհրդի քարտուղարին:

Քվեարկության արդյունքները հետևյալն են. կողմ՝ 20, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Քվեարկության արդյունքներով Խորհուրդը որոշեց.

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 56-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջը և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով, Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների Խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-րդ և 6-րդ ենթակետերի պահանջներով՝

1. Կասեցնել «ԵՊՀ հրատարակչություն» ՍՊԸ-ի գործունեությունը,

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կազմում ստեղծել «Հրատարակչություն» կառուցվածքային ստորաբաժանումը:

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման լուծարում:

Խորհրդի քարտուղար Ա. Իսրայելյանի կողմից Խորհրդի 32 անդամներին ուղարկվել են ԵՊՀ «Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման լուծարման քվեարկության թերթիկները: Խորհրդի թվով 20 անդամներ մասնակցել են քվեարկությանը և լրացված քվեաթերթիկները վերադարձրել են Խորհրդի քարտուղարին:

Քվեարկության արդյունքները հետևյալն են. կողմ՝ 19, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:

Խորհրդի մեկ անդամի կողմից ներկայացվել է հատուկ կարծիք (կցվում է արձանագրությանը):

Քվեարկության արդյունքներով Խորհուրդը որոշեց.

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 56-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջը և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով, Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների Խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-րդ և 6-րդ ենթակետերի պահանջներով՝ լուծարել ԵՊՀ «Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը:

Խորհրդի նախագահ՝

Գ. Մուրադյան

Խորհրդի քարտուղար՝

Ա. Իսրայելյան